

Կարեն Չայրապետյան
Պատմական գիտությունների թեկնածու

**1919 Թ. ՀՈՒՆՎԱՐ-ՓԵՏՐՎԱՐԻՆ ՓԱԽՍԱՎԱԿԱՆՆԵՐԻ
ԹՎԱՅԻՆ ՏՎՅԱԼՆԵՐԻ ԱՃԻ ՄԱՍԻՆ**

Պաշտոնական վիճակագրությամբ ամրագրված մեծաթիվ գաղթականության առկայությունը կարևոր գործոն էր հանդիսանում Չայաստանի Հանրապետության (1918-1920 թթ.) ներքաղաքական կյանքում և արտաքին քաղաքականության մեջ: Վերհանելով և համակարգելով Չայաստանի Հանրապետության առաջին տարում պաշտոնական փաստաթղթերում և մանուլի հրապարակումներում գաղթականների և արևմտահայ փախստականների թվային տվյալները՝ տեսանելի է դառնում դրանց աճի միտումը: Այն առավել էական էր 1919 թվականի հունվարի վերջերին-փետրվարի սկզբներին: Մինչև Արևմտահայ 2-րդ համագումար ընկած ժամահատվածը Չայաստանի Հանրապետության պետական կառավարման մարմինների և առանձին պաշտոնյաների կողմից ներկայացված գաղթականների և արևմտահայ փախստականների թվային տվյալներում տեղի էր ունեցել, նախկինի հետ համեմատած, կտրուկ աճ: Արևմտահայ փախստականների թվային տվյալների աճն ավելի ակնհայտ էր Արևմտահայ 2-րդ համագումարի փաստաթղթերում, որն այնուհետև ամրագրվել էր նորընտիր Արևմտահայ գործադիր մարմնի կողմից:

Չայաստանի Առաջին հանրապետությունում արևմտահայ փախստականների թվային տվյալներն առաջին անգամ ըստ շրջանների, վիճակագրական աղյուսակի տեսքով հանրությանը ներկայացվել էր 1919 թվականի հունվարի 2-ին Արևմտահայ փախստականների 2-րդ համագումարի կազմակերպիչ կոմիտեի կողմից հրապարակված շրջաբերական-հրահանգում (տես աղյուսակ 1, 3-րդ սյունակ): Շրջաբերական-հրահանգում հատուկ նշված էր, որ բերված վիճակագրական թվերի համար հիմք են ծառայել «Չայաստանի Հանրապետության 1918 թվականի հոկտեմբերի 1-ի միօրյա վիճակագրության և կառավարական շրջանային լիազորներից ստացված տեղեկությունները»¹: Այդ մարդահամարի արդյունքում ստացված և հանրագումարի բերված թվային տվյալները կազմել էին 180.000 ռուսահայ և 150.000 թուրքահայ գաղթական, ընդամենը 330.000 մարդ²:

Շրջաբերական-հրահանգի հանրագումարի բերված 129.841 արևմտահայ փախստականների թվային տվյալները չէին գերազանցում 1918 թվականի հոկտեմբերի 1-ի միօրյա մարդահամարի պաշտոնապես հայտարարված 150.000 թվաքանակը՝ ինչը շատ բնական էր, քանզի վերը նշված մարդահամարը իրականացրած արևմտահայ գործիչներ՝ Վ. Քրմոյանը, Ա. Դրամբյանը ղեկավար դերակատարություն էին ունեցել Արևմտահայ 2-րդ համագումարի կազմակերպիչ կոմիտեի, բուն համագումարի և վերջինիս կողմից ընտրված Արևմտահայ գործադիր մարմնի աշխատանքներում:

¹ Տես ՀԱԱ, ֆ. Պ-199, ց. 1, գ. 23, մաս 1, թ. 32:

² Տես «Կառավարության լրաբեր», 15 հոկտեմբերի, 1918 թ., նույնը տես Չայաստանի Հանրապետության պառլամենտի նիստերի արձանագրություններ, 1918-1920 թթ., Երևան, Չայաստանի ազգային արխիվ, 2010 թ., էջ 60:

Սակայն մինչ նշված շրջաբերական-հրահանգի հրապարակումը՝ դեռևս 1918 թվականի դեկտեմբերի 6-ին նորակազմ խնամատարության նախարարությունը ներկայացրել էր գաղթականների արդեն 350.000 թվային տվյալը՝ գաղթականության «մեծ շարժի» պայմաններում նրանց տեղաբաշխելով տասը գաղթականական շրջաններում¹: Այստեղ գաղթականական շրջանների փախստականների կլորացված, «նոտավոր» թվային տվյալների հանրագումարը 20 հազարով ավելի էր, քան վերը բերված միօրյա մարդահամարի 330 հազար գաղթականների թվաքանակը:

Նույն 1918 թվականի դեկտեմբերի 11-ին խնամատարության նախարար Ա. Խատիսյանը Հայաստանի Խորհրդին ներկայացնում էր նոտավորապես 386 հազար արևելահայ ու 200 հազար արևմտահայ փախստականների թվային տվյալները: Սակայն նրանց բաշխվածությունը արդեն չէր սահմանափակվում միայն Հայաստանի Հանրապետության այն ժամանակվա փաստացի տարածքով՝ Երևանի, Էջմիածնի, Ախտալի, Դիլիջանի, Նոր-Բայազետի շրջաններով, այլ ընդգրկում էր նաև Վրաստանը, Ռուսաստանը և այլ վայրեր²: Նույն այդ նիստի վերաբերյալ «Ձանգ»-ում հրապարակված տեղեկատվությունում գաղթականության թիվը 600 հազար է³:

1919 թվականի հունվարի 25-ին Հայաստանի Հանրապետությունում պարենավորման ճգնաժամի՝ ըստ էության սովի մասին խորհրդարանում ծավալված քննարկումներում պարենավորման նախարարի պաշտոնակատարը ներկայացնում էր արդեն 350 հազար արևմտահայ փախստական: Դրան գումարելով հանրապետության 1.704.000 բնակչության թիվը (Կարսի գաղթականությունը ներառյալ)՝ ստացվում էր հանրապետության ամբողջ ազգաբնակչության թվաքանակը՝ 2.054.000, որից «առնվազն կեսը բոլորովին հաց չունի»⁴: Հենց այդ կեսը կազմող մեկ միլիոնը հիմք ընդունելով որպես կարիքավորների թվաքանակ՝ զեկուցողը ներկայացնում էր 7 ամսվա, մինչև հաջորդ հունձը, անհրաժեշտ պարենային հացահատիկի և սերմացուի հաշվարկը: Նույն թվաքանակներն էին բերված նաև կառավարության աշխատակազմում վավերացված՝ պարենավորման նախարարի «Հայաստանի տարածքում պարենավորման գործի դրության մասին գրության» մեջ⁵:

Այդ ժամանակահատվածին էր վերաբերում նաև 1920 թվականին «Ժամանակ» օրաթերթում պատգամավոր Թ. Ավդալբեկյանի արած վկայությունն այն մասին, որ «խնամատարության մինիստր Ալ. Խատիսովը, Հայաստանի Խորհրդում մեզ տված բանավոր զեկուցումների ժամանակ հանրապետության սահմաններում գտնված գաղթականների թիվը հաշվում էր ընդհանրապես մեկ միլիոն»⁶: Հետաքրքրական է այն հանգամանքը, որ ստանձնելով գաղթականության խնամատարության գործը՝ խնամատարության նախարարությունը ներքին գործերի նախարարությունից իր ենթակայության տակ էր վերցրել վերը նշված մարդահամարը իրականացրած գաղթականական վիճակագրության բաժինը⁷: Միաժամանակ, որոշ տեղեկություններով 1918 թվականի հոկտեմբերի 1-ի մեկօրյա մարդահամարի ամփոփ տվյալները

¹ Տե՛ս ՀԱԱ, ֆ. Պ-199, ց. 1, գ. 22, թ. 4:

² Տե՛ս «Ժողովուրդ», 1 հունվարի, 1919 թ.:

³ Տե՛ս Հայաստանի Հանրապետության պառլամենտի նիստերի արձանագրություններ, 1918-1920 թթ., էջ 115:

⁴ Տե՛ս ՀԱԱ, ֆ. Պ-198, ց. 1, գ. 15, թ. 88-89; նույնը՝ Հայաստանի Հանրապետության պառլամենտի նիստերի արձանագրություններ, 1918-1920 թթ., էջ 167:

⁵ Տե՛ս ՀԱԱ, ֆ. Պ-199, ց. 1, գ. 26, թ. 4:

⁶ Տե՛ս «Ժողովուրդ», 29 հոկտեմբերի, 1920:

⁷ Տե՛ս ՀԱԱ, ֆ. Պ-205, ց. 1, գ. 563, մաս 1, թ. 219:

հանձնվել էին խնամատարության նախարարին¹: Սակայն այդ մարդահամարի ամփոփ տվյալները փաստորեն չէին դրվել շրջանառության մեջ:

Այդ թվային տվյալները ներկայացվում էին ոչ միայն հանրապետության հանրությանը, այլև Անտանտի դաշնակից երկրների ներկայացուցիչներին: Վերը նշված պարենավորման նախարարի պաշտոնակատարի զեկուցման ժամանակ նաև հայտարարվել էր, որ գաղթականների և պարենավորման մասին «բազմաթիվ անգամ կառավարությունը դիմել է դաշնակիցներին, բայց դեռ պատասխան չկա: Վերջին անգամ մեր ֆինանսների և պարենավորման մասին երկու մանրամասն զեկուցում ուղարկեցինք անգլիական միսիային, բայց դրանք մինչև այժմ մնում են անպատասխան»²:

Նմանօրինակ մի փաստաթուղթ էր հանդիսանում Վրաստանում Հայաստանի կառավարության ներկայացուցչի 1919 թվականի հունվարի 29-ով թվագրված և Այսրբկովկասում բրիտանական զինված ուժերի հրամանատարության քաղաքական մասի վարիչ գեներալ Բիչին փետրվարի 1-ին ներկայացված գաղթականների թվաքանակի և կարիքների մասին տեղեկությունները³: Հետաքրքրական է, որ այս փաստաթուղթը դաշնակիցներին տրամադրվել էր մասնավոր կարգով: Այստեղ բերվում էր թուրքահայաստանից և Ռուսահայաստանից 650.000 փախստականների ընդհանուր թիվը⁴: Մինչդեռ նախորդ ժամանակաշրջանում հանրապետության ներկայացուցիչները կենտրոնական տեղությունների մայրաքաղաքներում, Ուկրաինայում և Խորհրդային Ռուսաստանում ներկայացնում էին հանրապետության այն ժամանակվա սահմաններում 600.000 փախստական⁵: Վերը նշված 650.000 փախստականներից 400 հազարը գտնվում էին Հայաստանի Հանրապետության տարածքում, 150 հազարը՝ Վրաստանում և 100 հազարը՝ Հյուսիսային Կովկասում⁶:

Հիմնավորելով փախստականների ներկա ու ապագա գտնվելու վայրերում նրանց կարիքները հոգալու անհրաժեշտությունը՝ դիմումի հեղինակները վերջիններին ավելացնում էին նաև Հայաստանի Հանրապետության օգնության կարիք ունեցող մոտ 350.000 ազգաբնակչությանը: Արդյունքում ստացվում էր մոտ մեկ միլիոն կարիքավոր ազգաբնակչության թվաքանակ: Այնուհետև այդ փաստաթղթում բերվում էր նրանց կարիքները հոգալու համար անհրաժեշտ ցորենի ու այլ սննդամթերքի, գյուղատնտեսությանը զբաղվելու համար սերմացուի, կենդանիների ու գործիքների, վերադարձող գաղթականների տների վերականգնման, բժշկական օգնության կազմակերպման, հիվանդանոցի ու դեղորայքի և այլ անհրաժեշտ պարագաների ու իրերի մի բավականին ստվար ցանկ⁷:

Գաղթականության վիճակագրական տվյալների աճի հետ կապված այդ ամբողջ գործընթացի արտաքին քաղաքական նպատակները ակնհայտ էին դարձել 1919 թվականի ապրիլի սկզբներին՝ Հայաստանի Հանրապետության ներկայացուցիչների և Այսրկովկասում բրիտանական հրամանատարության միջև Թիֆլիսում կայացած վճռորոշ բանակցությունների ժամանակ: Այս բանակցություններում քննարկվող կա-

¹ Տե՛ս «ժողովուրդ», 2 նոյեմբերի, 1920:

² Տե՛ս ՀԱԱ, ֆ. Պ-198, ց. 1, գ. 15, թ. 88; նույնը՝ Հայաստանի Հանրապետության պառլամենտի նիստերի արձանագրություններ, 1918-1920 թթ., էջ. 166-167:

³ Տե՛ս ՀԱԱ, ֆ. Պ-200, ց. 1, գ. 55, թ.թ. 20; 21-23 և հակ.:

⁴ Տե՛ս ՀԱԱ, նույն տեղում, թ. 21:

⁵ Տե՛ս ՀԱԱ, ֆ. Պ-222, ց. 1, գ. 24, մաս 3, թ. 398; ֆ. Պ-1022, ց. 5, գ. 361, թ. 3:

⁶ Տե՛ս ՀԱԱ, ֆ. Պ-200, ց. 1, գ. 55, թ. 21-ի հակ.:

⁷ Տե՛ս ՀԱԱ, նույն տեղում, թ.թ. 22-ի հակ.-23 և հակ.:

րևոր հարցերից էր Կարսի, Շարուր-Նախիջևանի արևելահայ և արևմտահայ փախստականների հայրենիք վերադարձնելու հարցը: Այստեղ գեներալ Բիչի հետ հանդիպման ժամանակ Հայաստանի Հանրապետության վարչապետի պաշտոնակատար, ներքին գործերի նախարար Ա. Խատիսյանին ներկայացվել էին գաղթականների հետևյալ թվային տվյալները՝ Կարսի հայեր՝ 108.000, թուրքահայեր՝ 208.000 «Երևանյան» Հայաստանում, 28.000 Վրաստանում և անորոշ քանակության Դյուսիսային Կովկասում, ինչպես նաև Թուրքահայաստանում բնակվող 50.000 արևմտահայեր¹: Հատկանշական է, որ բանակցությունների սղագրությունում Ա. Խատիսյանը բավարարված արձանագրել էր, որ իր գրուցակից գեներալ Բիչը ցուցաբերել էր հայ ազգաբնակչության և գաղթականության տեղաբաշխման վերաբերյալ «զարմանալիորեն ճշգրիտ վիճակագրություն»:

Գաղթականների թվային տվյալների կտրուկ աճի նման պայմաններում 1919 թվականի փետրվարի 4-ին սկսվել էին Արևմտահայ 2-րդ համագումարի աշխատանքները: Փետրվարի 6-ին համագումարի պաշտոնական առաջին նիստում հաստատվել էր մանդատային հանձնաժողովի կողմից ներկայացված պատգամավորների անվանացանկը և ըստ Հայաստանի Հանրապետության շրջանների նրանց ընտրած արևմտահայ փախստականների թվաքանակները² (տես աղյուսակ 1, 4-րդ սյունակ): Արևմտահայ 2-րդ համագումարի կողմից ընդունված 219.793 արևմտահայ փախստականների ընդհանուր քանակին գումարելով նաև Ղարաբիլիսայի, Ղամարլուի, Սիսիանի և Դարալազյազի փախստականների թվաքանակը, որոնց պատգամավորները տարբեր պատճառներով համագումար չէին ներկայացել, շրջաբերական-հրահանգում բերված պաշտոնական թվային տվյալներով արևմտահայ փախստականների թիվը 241.293 է: Համեմատալով այդ թվային տվյալները մեկ ամիս առաջ շրջաբերական-հրահանգում բերված արևմտահայ փախստականների թվաքանակի հետ, տեսնում ենք, որ տեղի էր ունեցել թվաքանակի մոտ երկու անգամ աճ:

Արևմտահայ 2-րդ համագումարի աշխատանքների ավարտից երկու շաբաթ անց՝ 1919 թվականի փետրվարի 27-ին համագումարում ընտրված Արևմտահայ գործադիր մարմնի կողմից «Արարատյան» հանրապետության խորհրդարանին ուղղված գրության մեջ նշվում էր Հայաստանի Հանրապետության այդ ժամանակվա սահմաններում 240 հազար արևմտահայություն³: Նույն այդ գրությունում, մատնանշելով հանրապետության պետական և օրնեսդրական հաստատություններին արևմտահայերի մասնակցությունը բերելու մասին Արևմտահայ 2-րդ համագումարի քաղաքական որոշումը, Արևմտահայ գործադիր մարմինը առաջարկում էր խորհրդարանին տեղ տալ Հանրապետության սահմաններում եղած արևմտահայության ներկայացուցիչներին խորհրդարանի մեջ՝ իրենց թվականի համեմատությամբ, այն է՝ 240.000 արևմտահայությանը 12 ներկայացուցիչ⁴:

Նույն օրով թվագրված մեկ այլ փաստաթղթում Գործադիր մարմնի դիվանի կողմից բերվում են Հայաստանի Հանրապետության սահմաններում ապաստանած արդեն իսկ 263.393 արևմտահայերի թվային տվյալները՝ նշելով, որ այն պատրաստվել

¹ Տե՛ս ՀԱԱ, ֆ. Պ-199, ց. 1, գ. 32, թ. 164:

² Տե՛ս Համառոտ Տեղեկագիր Արևմտահայ երկրորդ համագումարի և կազմակերպիչ կոմիտեի հաշիվը, 1919, Երևան, Թիֆլիս, Տպ. «Աշխատավոր», 1919, էջ 9-10:

³ Տե՛ս ՀԱԱ, ֆ. Պ-243, ց. 1, գ. 9, թ. 20:

⁴ Տե՛ս ՀԱԱ, նույն տեղում:

է «համաձայն Արևմտահայ Բ Համագումարի պատգամավորների բերանացի և գրավոր զեկուցումներու»¹ և ներկայացնում է նրանց բաշխվածությունը ըստ հանրապետությանը ենթակա շրջանների² (տես աղյուսակ 1, 5-րդ սյունակ):

Գործադիր մարմինը նույն թվային տվյալները բերում էր նաև Արևմտյան Հայաստան ներգաղթը կազմակերպելու մասին գրության մեջ³: Այստեղ նաև նշվում էր, որ այդ թվերի մեջ չեն մտնում Հայաստանի Հանրապետությունից դուրս՝ Ռուսաստանում և Կովկասում գտնվող արևմտահայերը: Հատկանշական է, որ այս փաստաթուղթը նույնպես տրամադրվել էր Թիֆլիսում դաշնակից պետությունների ներկայացուցիչներին:

Նախորդ փաստաթղթում Գործադիր մարմինը ներկայացնում էր նաև 1917 թվականի մարդահամարի տվյալները, ըստ որի Հայաստանի Հանրապետության այն ժամանակվա սահմաններում ապրում էին 682.437 արևելահայ, 160.000 թուրք և քուրդ, 12.000 եզդի, 8.000 ռուս: Բաժանելով այդ թվային տվյալները Հայաստանի հորհրդի անդամների թվաքանակի վրա՝ Գործադիր մարմինը հանգում էր այն եզրակացության, որ Հայաստանի հորհրդում յուրաքանչյուր պատգամավոր ներկայացնում էր միջինը 20 հազար մարդ: Հինք ընդունելով նմանօրինակ վիճակագրությունը՝ Գործադիր մարմինը ևս մեկ անգամ հիմնավորում էր արևմտահայերին Հայաստանի հորհրդում 12 պատգամավորով ներկայացնելու առաջարկը:

Անհրաժեշտ է ուշադրություն դարձնել այն հանգամանքի վրա, որ այդ վիճակագրության համաձայն Հայաստանի Հանրապետության այն ժամանակվա սահմաններում եղած ազգային առանձին խմբերի մեջ իրենց թվաքանակով արևմտահայերը դառնում էին (արևելահայերից հետո) երկրորդ խումբը, ինչը մեծապես բարձրացնում էր արևմտահայ փախստականների և նրանց ներկայացնող Գործադիր մարմնի ներքաղաքական ու արտաքին քաղաքական դերը: Այսպիսով հասկանալի է դառնում Գործադիր մարմնի գրություններում արևմտահայերին որպես հայության «խոշոր հատված» ներկայացնելու ընդգծված մոտեցումը⁴: Ակներև է, որ իր քաղաքական դերն արժևորելու նպատակ էր հետապնդում Փարիզի կոնֆերանսի նախագահությանն ուղղված Գործադիր մարմնի գրությունը, որտեղ Արևմտահայ 2-րդ համագումարը ներկայացվում էր որպես Կովկասում ապաստանած արդեն իսկ 400.000 արևմտահայերի համագումար⁵:

Արևմտահայ փախստականների թվային տվյալների նմանօրինակ աճը, անկասկած, միջնորդավորված էր և իրականացվել էր հիմնականում Խնամատարության նախարարության համակարգում ծառայող ու համագումարի պատգամավոր, այնուհետև Գործադիր մարմնի անդամ հանդիսացող արևմտահայ գործիչների միջոցով: Պատահական չէր նաև այն հանգամանքը, որ հանրապետության իշխանությունների ու արևմտայերի բերած թվային տվյալները նույն կարգի էին և ունեին իրարից չնչին, ոչ էական շեղումներ: Ամենայն հավանականությամբ, այդ իրավիճակը պայմանավորված էր հանրապետության իշխանությունների և Արևմտահայ Գործադիր մարմնի կողմից արևմտահայ փախստականների նույնանման թվային տվյալները դաշնա-

¹ Տես ՀԱԱ, նույն տեղում, ք. 22:

² Տես ՀԱԱ, նույն տեղում, ք. 23:

³ Տես ՀԱԱ, ֆ. Պ-243, ց. 1, գ. 9, ք. 33:

⁴ Տես Համառոտ Տեղեկագիր Արևմտահայ երկրորդ համագումարի կկազմակերպիչ կոմիտեի հաշիվը, 1919, Երևան, էջ 18:

⁵ Տես ՀԱԱ, նույն տեղում, ք. 10:

կիցներին երկուստեք ներկայացնելու անհրաժեշտությամբ: Միաժամանակ, օգտվելով թվային տվյալների աճի հանգամանքից, արևմտահայ գործիչները այն պարզապես օգտագործել են իրենց ազգային-քաղաքական նպատակների հիմնավորման և իրագործման համար:

Այսպիսով, արևմտահայ փախստականների և գաղթականների թվային տվյալների իրական աճը, ընդհանուր առմամբ, պայմանավորված էր մի քանի հանգամանքներով: Առաջին աշխարհամարտում դաշնակիցների տարած հաղթանակի արդյունքում ստեղծված նոր աշխարհաքաղաքական պայմանները, որոնք ինչպես հանրապետության ղեկավար շրջանակների, այնպես էլ արևմտահայ գործիչների մի զգալի մասի մոտ արթնացրել էին որոշակի ակնկալիքներ: Այդ շրջանակները մեծապես խանդավառված էին մոտ ապագայում Հայաստանի Հանրապետության սահմանների սպասվելիք ընդարձակումով և իրենց բնակավայրերն արևմտահայ ու արևելահայ գաղթականների անխուսափելի վերադարձով:

Առաջին աշխարհամարտում Անտանտի դաշնակից երկրների հաղթանակից հետո արևմտահայ և արևելահայ փախստականների ներգաղթը դառնում էր Հայաստանի Հանրապետության արտաքին քաղաքականության օրակարգային խնդիր, որի լուծմանը մեծապես նպաստում էր գաղթականության համապատասխան վիճակագրությունը: Այսրկովկասում բրիտանական հրամանատարության հետ շփումների ու բանակցությունների ժամանակ Կարսի, Շարուր-Նախիջևանի և արևմտահայ փախստականների վերադարձի հարցերը կառավարությունը օգտագործում էր նաև որպես կարևոր փաստարկ այդ տարածաշրջաններում Հայաստանի Հանրապետության իշխանության հաստատման անհրաժեշտությունը հիմնավորելու համար:

Միաժամանակ, 1918-1919 թվականների ծնռանը հանրապետությունում ստեղծված սոցիալ-տնտեսական ծանր իրավիճակում՝ սովի և բժավոր տիֆի համաճարակի պայմաններում, օրակարգում առաջնահերթ էր դարձել դաշնակիցների կողմից գաղթականներին և կարիքավոր ազգաբնակչությանը անհետաձգելի պարենային օգնությամբ ապահովելու անհրաժեշտությունը: Ընդ որում, հանրապետության իշխանությունները միանշանակ կարիքավոր էին դիտարկում իրենց բնակավայրերը վերադարձած նախկին արևելահայ փախստականներին:

Այդ իրավիճակում հանրապետության իշխանությունները, մի կողմից, շրջանառության մեջ էին դնում պաշտոնական վիճակագրությամբ ամրագրված Հայաստանի Հանրապետության ակնկալվող, նոր սահմաններում բնակվող ամբողջ ազգաբնակչության թվային տվյալները: Այդ սահմաններն Այսրկովկասում ներառում էին Երևանի նահանգը ամբողջությամբ, Գանձակի նահանգի արևմտյան կեսը, Կարսի նահանգը՝ առանց Արդահանի հյուսիսային մասի, Թիֆլիսի նահանգի հարավարևմտյան մասը¹: Ակներև է, որ թվային այդ տվյալների համար հիմք կարող էին հանդիսանալ միայն նախորդ տարիներին, հատկապես 1917 թվականին ռուսական իշխանությունների կողմից իրականացված մարդահամարները²: Մյուս կողմից՝ արևմտահայ և արևելահայ գաղթականության թվաքանակը հաշվառվում էր ոչ միայն Հայաստանի Հանրապետության ակնկալվող սահմաններում, այլև Վրաստանում և Հյուսիսային Կովկասում ապաստանած արևմտահայ փախստականների ընդգրկումով: Վերջին

¹ Տե՛ս ՀԱԱ, ֆ. Պ-205, ց. 1, գ. 539, թ. 18:

² Տե՛ս Արևելյան Հայաստանը 1916-1917 թթ. մարդահամարներում, Երևան, Հայաստանի ԳԱ հրատարակչություն, 1992:

մոտեցումը նույնպես հասկանալի էր, քանզի ամենուրեք առկա էր ինչպես գաղթականների հայրենի օջախները վերադառնալու անկոտրում ձգտումը¹, այնպես էլ Հայաստանի Հանրապետության սահմաններից դուրս գտնվող, հատկապես Հյուսիսային և Հարավային Կովկասում ապաստանած գաղթականության օժանդակության գործը իրենց վրա վերցրած հանրապետության ազգային իշխանությունների պարտավորությունը:

Արևմտահայ փախստականների թվային տվյալների նման աճը պայմանավորված էր նաև այն հանգամանքով, որ վիճակագիրների տրամադրության տակ չկային նախկին մարդահամարների հենակետային թվային տվյալներ: Հիմք ընդունելով և օգտագործելով հանրապետական, տարածքային կառավարման ու տեղական ինքնակառավարման մարմինների, գաղթականական, հայրենակցական և նմանատիպ այլ կազմակերպությունների ու առանձին անհատների, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության դիվանագիտական ներկայացուցչությունների կողմից ներկայացված թվային տվյալները՝ համապատասխան վերլուծության հիման վրա, վիճակագիրները գալիս էին փախստականների թվաքանակի վերաբերյալ որոշակի եզրահանգումների: Նման վերլուծական աշխատանքի օրինակ էր 1919 թվականի մարտին Նախիջևանի գաղթականների թվաքանակի ճշտման նպատակով կատարված վերլուծությունը²: Սակայն այդ ժամանակաշրջանում հանրապետության ընդարձակվող սահմանների, գաղթականների «մեծ շարժի», նոր ձևավորվող տարածքային և տեղական ինքնակառավարման մարմինների, ինչպես նաև հանրապետությունից դուրս՝ Հարավային և Հյուսիսային Կովկասում դիվանագիտական ներկայացուցչությունների բացակայության կամ դրանց կազմավորման պարագայում հանրապետության իշխանությունները դեռևս հնարավորություն չունեին իրականացնելու փախստականների լիարժեք հաշվազրույց կամ հաշվառում:

¹ Տե՛ս **Ռ. Հակոբյան**, Հայրենիք վերադառնալու գաղափարը և ժամանակակից միջազգային իրավունքը, Երևան, 2000: Նույնի՝ Տարագիր հայության հայրենիք վերադառնալու պահանջի պատմական ու իրավական հիմքերը, Երևան, 2002:

² Տե՛ս ՀԱԱ, ֆ. 205, ց. 1, գ. 541, թ.թ. 5-8 և հակ.; նույնը՝ ՀԱԱ, ֆ. 71-200, ց. 1, գ. 212, թ.թ. 88-91 և հակ; «Բանբեր Հայաստանի արխիվների», № 2(114), Երևան, 2009, էջ 57-60:

Ա Ղ Յ Ո Ւ Ս Ա Կ 1

N N	Հայաստանի Հանրապետության շրջաններ	Արևմտահայ փախստականների թվաքանակ		
		Ըստ Արևմտահայ 2-րդ համագումարի շրջաբերական հրահանգի	Ըստ Արևմտահայ 2-րդ համագումարի մանդատային հանձնաժողովի զեկուցման	Ըստ Արևմտահայ Գործադիր մարմնի վիճակագրական տվյալների
1.	Երևան	15.500	31.700	31.700
2.	Էջմիածին	6.800	42.600	42.600
3.	Աշտարակ	15.885	12.880	12.880
4.	Սուրմալու	12.000	25.700	25.700
5.	Կըրիս-Բուլաղ (Կոտայք)	16.698	17.570	17.570
6.	Ախտա (Հրազդան)	14.439	23.750	23.752
7.	Նոր-Բայազետ	12.000	27.923	27.923
8.	Միլի-Դարա (Միլի Չոր)	6.000	10.670	10.670
9.	Սիսիան	13.000	-	22.890
10.	Դարալազյազ (Եղեգնաձոր)	2.000	-	3.608
11.	Բաշգյառնի (Գառնի)	2.500	5.000	5.000
12.	Դիլիջան	3.519	12.000	12.000
13.	Ղարաքիլիսա (Վանաձոր)	3.500	-	9.000
14.	Ալեքսանդրապոլ (Գյումրի)	3.000	10.000	10.100
15.	Ղամարլու (Արտաշատ)	3.000	-	2.000
16.	Ապարան	-	-	6.000
	Ընդամենը	129.841	219.793	263.393

Карен Айрапетян, Об увеличении численности беженцев в январе-феврале 1919 года – Основываясь на архивных материалах, в статье приводятся факты официального увеличения в Республике Армения численности как западноармянских, так и беженцев в целом. Резкий рост численности беженцев был отмечен властями республики в январе-феврале 1919 года. Почти двойное увеличение численности западноармянских беженцев было отмечено также на втором съезде западноармянских беженцев в начале февраля. Новые официальные данные о численности как западноармянских, так и беженцев в целом властями республики и западноармянскими общественно-политическими деятелями представлялись как общественности РА, так и представителям вооруженных сил Великобритании и стран Антанты в Закавказье.

В статье приводятся как цели, преследуемые властями республики и западноармянскими общественно-политическими деятелями, так и обстоятельства, которые привели к увеличению численности беженцев.

Karen Hayrapetyan, About increase of the number of refugees in January-February 1919 – Being based on archive materials, the article presents facts about the official increase of the number of both Western Armenian and refugees in general in Republic of Armenia. The sharp rise of the number of refugees was carried out by the authorities of the Republic in January-February 1919. Almost doubling of the number of Western Armenian refugees was also carried out at the second congress of the Western Armenian refugees in early February. New official facts of the number of both Western Armenian and refugees in general were presented by the authorities of the Republic and Western Armenian public and political figures to the Armenian community and to the representatives of the armed forces of the United Kingdom and the countries of the Triple Entente in South Caucasus. Also the article introduces the objectives pursued by the authorities of the Republic and Western Armenian public and political figures and the circumstances which led to the increase of the number of refugees.

